


ՍՈՒՏ ԵՐԴՈՒՄ

Բայց երդունով մեր բերնին խօսքը կը հաստատենք, որովհետև առանց երդումի չեն հաւատար: Աղջկայ հաստատում մը չէ, այլ սատանայական սովորութիւն մը, որովհետև առաքինի միտքերը խօսքը կ'ընտրեն եւ ո՛չ թէ երդումը: Արդարեւ կը հաւատանք աստուածավախ առանքի մարդերու, նոյնիսկ եթէ անոնք երդում չկատարեն, մինչդեռ ոչ ոք կը հաւատայ անառակներուն եւ շողոքորթներուն նոյնիսկ եթէ բիւր անգամ երդում ընեն, որովհետև ամէն մարդ միտքի ամրութեան եւ առաքինութեան կը նայի եւ ոչ թէ շողոքորթ խօսքերու եւ շատախօս լեզուին: Որովհետև միտքով, խօսքով կամ երդունով ամուր ըլլալը շատ աւելի մեծ առաքինութիւն է, քան ողորմութիւն եւ զոհ մատուցանելը, քանզի այս մէկը կապ ունի հարստութեան հետ, իսկ խօսքի կամ երդումի մէջ ամուր ըլլալը միտքի առաքելութիւն է եւ ան, որ առաքինի միտք ունի ոչ ոք անկէ երդում կը պահանջէ, իսկ երդում ընելու սովորութիւնը յառաջ կու գայ Աստուծոյ վախի պակասէն եւ անգիտակից յիմարութենէն: Երդում ընողը միշտ իր խօսքը երդումին կը պահէ եւ իր հոգին գեղեցիկ կրակին կը մատնէ:



ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցին մէկ անձ եղաւ: Ակընկալութիւնը բնականաբար Քրիստոսի սիրով միագանգուած ժողովուրդին է:

Նիկիական հանգանակը հետեւեալ սահմանումը կատարած է եկեղեցոյ համար.- **Հաւատամք եւ ի Մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի...**:

Ուրեմն աստուածաբանական հասկացողութեամբ եկեղեցին **Մէկ է, Ընդհանրական է, Առաքելական է Սուրբ է:**

Եկեղեցին մէկ է, որովհետև անոր հիմնադիրը՝ Քրիստոս մէկ է: Այստեղ կ'ուզեմ մէջբերել Յիսուսի առաքեալներուն ուղղած յորդորական վերջին կտակէն հետեւեալ խօսքը, որ եկեղեցոյ մէկ ըլլալուն մասին գեղեցկագոյն վկայութիւնը կու տայ.

«Կ'աղօթեմ, որ անոնք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն, ո՛վ Հայր, իմ մէջս ես եւ ես քու մէջդ, այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան...» (Յովհ. Գլ. ԺԷ.21):

Շարունակելի

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ քեղք



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 6 ՅՈՒՆԻՍ 2021

ԹԻՒ 23

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ  
Առ. 9.1-6: Ձք. 3.7-4.9: Եբր. 9.1-10  
ՅԻՍՈՒՄ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 10.22-30

ՏՕՆ Է ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆԻ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 10.22-30

Չմեռ էր: Երուսաղէմի մէջ տաճարին Նաւակատիքի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս տաճարին Սողոմոնի սրահին մէջ կ'երթեւեկէր, երբ իր շուրջ հաւաքուեցան հրեաներ եւ հարցուցին. «Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես: Եթէ դուն ես Քրիստոսը՝ յստակ ըստ՝ մեզի»:

Յիսուս պատասխանեց. «Արդէն իսկ ձեզի ըսած եմ, սակայն չէք հաւատար: Այն գործերը, որ Հօրս անունով կը կատարեմ, անոնք իսկ կը վկայեն՝ թէ ո՛վ եմ ես: Բայց դուք չէք հաւատար, որովհետև իմ ոչխարներէս չէք: Ես ոչխարներս կը ճանչնամ: Անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի ու ես անոնց յախտենական կեանք կու տամ: Անոնք բնաւ պիտի չկորսուին: Ո՛չ որ պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս: Հայրս այդ ոչխարները ինծի տուաւ եւ ոչ ոք կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետև Հայրս բոլորէն աւելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք»:

\*\*\*\*\*

Ես ոչխարներս կը ճանչնամ: Անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի ու ես անոնց յախտենական կեանք կու տամ: Անոնք բնաւ պիտի չկորսուին:

Երկնաւոր Հայրը իր այս իմաստալից խօսքով կու գայ վստահեցնելու բոլոր անոնց, որոնք Յիսուսը կը ճանչնան որպէս հովիւ, թէ իրենք պիտի չկորսուին: Այս կը վստահեցնէ, թէ արդէն իրենք մահէն դէպի կեանք անցած են: Սիրելի ընթերցողներ, մենք իբրեւ Քրիստոնեաներ՝ Քրիստոսի անունը կրող անձներ, կը լսե՞մք Քրիստոսի ձայնը մեր կեանքին մէջ, որ ամէն օր կ'ուզէ մեզի հետ խօսիլ եթէ պատրաստ ըլլանք: Այսօր հրաւիրուած ենք բոլորս լսելու եւ ականջ տալու Քրիստոսի ձայնին:

Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՕՆ

Ս. էջմիածինի Մայր տաճարը հայոց առաջին եկեղեցին է: Ան կառուցված է 301-303 թուականներում, Տրդատ Թագաւորին եւ հայոց առաջին հայրապետ՝ Գրիգոր Լուսաւորիչի օրով:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը խոր Վերապէն ելլելէն ու Քրիստոսի հաւատքը հայերուն մէջ քարոզելէն ետք ունեցաւ տեսիլք մը, ըստ որուն Աստուծոյ Միածին Որդին երկինքէն իջնելով ոսկեայ մուրեկով նշեց տաճարին վայրը ու գծեց անոր յատկագիծը: Այս ձեւով է, որ նշանակուեցաւ Հայ եկեղեցւոյ սկիզբը եւ մեր այս առաջին եկեղեցին կոչուեցաւ՝ էջմիածին, խորհրդանշելու համար Աստուծոյ Միածին Որդիին իջած տեղը:

Ս. էջմիածնի Մայր տաճարը կառուցուեցաւ Վաղարշապատ քաղաքին մէջ: Վաղարշապատը հին Հայաստանի հոգեւոր կեանքի կեդրոնը կը նկատուի եւ հոն հինգերորդ դարէն սկսեալ բացուած է հայկական առաջին դպրոցը: Մայր եկեղեցւոյ անունով, այս քաղաքը նաեւ կոչուած է էջմիածին: Էջմիածինը կարելի է համարել ուխտավայր ու կարելի է գայն նմանցնել հայկական Նրուսաղէմի:

Միածինի էջքը եւ հայ եկեղեցւոյ հաստատումը Հայաստանեայց եկեղեցւոյ կարեւոր տօներէն է, որ կը նշուի Հոգեգալուստէն ետք եկող երկրորդ Կիրակին եւ Զատիկի 10-րդ Կիրակին:

1700 տարիներ շարունակ, էջմիածինը ենթարկուած է զանազան աւերումներու: Նորոգութիւններ եղած են, որոնց հետեւանքով անոր նախնական ձեւը խախտած է: Այս փոփոխութիւններու կարգին կարելի է թուել 1682-ին Եղիազար կաթողիկոսին պատուերով տաճարին կեդրոնը՝ գլխաւոր գմբէթին տակ շինուած «Իջման Սեղանը» եւ եկեղեցւոյ հարաւային, հիւսիսային եւ արեւելեան կողմերը աւելցուած երեք փոքր գմբէթները:

Ըստ մեր եկեղեցւոյ տօնացոյցին, Ս. էջմիածնի տօնը այս տարի կը գումարուի Կիրակի, 6 Յունիս, 2021-ին:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՍԻՐԵՆՔ ԶԱՍՏՈՒԱԾ

Մենք ինչո՞ւ կը սիրենք զԱստուած: Որովհետեւ բարերար է եւ մենք իր բարերարութեան կարի՞քը ունինք, կամ որովհետեւ ամենակարող է, եւ մենք չե՞նք կրնար իր կամքին հակառակ կենալ, կամ որովհետեւ մեր յաւիտենականութիւնը իրմէ կախեալ է անո՞ր համար պէտք է սիրենք զինք: Եթէ այս պատճառներով է որ զինք կը սիրենք՝ կե՞ղծ է մեր սերը: Անկեղծ սերը՝ առանց պայմանի եղող սերն է:

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՀԵՏԱՊՆՂԵՍ ՆՄԱՆՂ

Սատանան եւ անոր կամքը ընող մարդիկ, կը հետապնդեն մեր քայլերը, որպէսզի թակարդեն մեզ: Աստուած ի՞նքն եւ կը հետապնդէ մեր քայլերը, բայց ո՛չ թէ թակարդելու մեզ, այլ՝ մեզ Զարին թակարդէն ազատելու: Իսկ դուն, եթէ նմանիդ քայլերը հետապնդող մըն ես, ի՞նչ նպատակով կ'ընես այդ մէկը:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ՍԿԱԽՍ ԵՒ Կ'ԱԲԱՐՏԵՍ ՕՐԴ

Գալիք օրերու համար մեր հոգեւոր խորհրդածութեան առանցքը պիտի դարձնենք Յովհաննէսի Աւետարանին մէջ յիշուած շնացող կնոջ դրուագը (Յհ. 8.3-11), որմէ շատ բան ունինք սորվելիք: Յհ. 8.2-ին մէջ կը կարդանք, որ Յիսուս առաւօտ կանուխ տաճար գնաց եւ ժողովուրդը իրեն կու գար եւ ինք անոնց կ'ուսուցանէր: Յիսուս իր օրը կ'աւարտէր աղօթքով (Յհ. 8.1), եւ օրը կը սկսէր աղօթքով եւ ուսուցանելով: Նայեցէք սակայն Փարիսեցիներուն: Անոնք իրենց օրը կ'աւարտէին չար խորհուրդներ եւ ծրագիրներ մշակելով եւ օրերնին կը սկսէին անգթութեամբ, քննադատութեամբ, եւ մեղաւոր մարդիկ փնտռելով եւ անոնց մահը պահանջելով:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Միտելի ընթերցող, դուն ի՞նչպէս կը սկսիս եւ կ'աւարտես օրդ: Աղօթքով, թէ՛ չար ծրագիրներ մշակելով: Վստահ եղի՛ր, որ եթէ օրդ աւարտես չար բաներ ծրագրելով եւ չար բաներ մտածելով անկասկած, որ Փարիսեցիներուն նման օրդ պիտի սկսիս չարիք գործելով:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԳԷՊ ՔՈՒ ՎԱՏԱԿՈՒԹԻՒՆԻՎ Կ՛ՈՒԶԵՍ ԱՐՏԱՅԱՅՏԵԼ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 22

Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թուղուցիր: Ցաւէս կը մոնչամ, ինչո՞ւ օգնութեան չես հասնիր: Ո՛վ իմ Աստուածս, ո՛չ ցերեկը պատասխան կու տաս կանչիս, ո՛չ գիշերը հանգիստ կը գտնեմ քեզմէ: Բայց դուն սուրբ ես՝ գահիդ բազմած, եւ դէպի քեզ կը բարձրացնեմ ժողովուրդիդ ներբողները: Մեր հայրերը քեզի՛ վստահեցան եւ ազատեցիր զանոնք: Քեզի աղաղակեցին եւ ազատեցան, քեզի վստահեցան, եւ ամօթով չմնացին: Թշնամիներու աչքին ես մարդ չեմ, այլ՝ որդ, մարդոց կողմէ արհամարհուած, բոլորին կողմէ անարգուած: Բոլոր զիս տեսնողները կը ծաղրեն զիս, ծամածուծութիւն կ'ընեն, գլուխ կ'երերցնեն ըսելով. «ՏԻՌՈՋ ապաւինեցաւ, թող ՏԵՂԸ փրկէ զայն, եթէ հաւներ է՝ թող ազատէ զայն»: Այո՛, ո՛վ ՏԵՂ, դո՛ւն ես որ զիս մօրս արգանդէն հանեցիր, դո՛ւն զիս պահեցիր մօրս կուրծքին վրայ: Մօրս արգանդէն իսկ քեզի՛ յանձնուեցայ, ծնելէս իսկ առաջ՝ դո՛ւն ես իմ Աստուածս: Հեռու մի մնար ինձմէ, որովհետեւ նեղութիւնը մօտ է, եւ օգնող չկայ: Թշնամիներս ցուկերու պէս զիս պատեցին, պաշարեցին զիս Բաշանի կատաղի ցուկերուն պէս: Իրենց բերանը իմ վրաս լայն բացին՝ մոնչող ու բզկտող առիւծի պէս:

Միշտ կարդանք Սաղմոսագիրքը: